ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ըստ հրամանի Վեհ. Հայրապետին՝ Աստրախանայ Վիճակին Առաջնորդ Գեր. Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեանց ի 12ն ամսոյս եկաւ այսր ի Ս. Էջմիածին։

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Արցախոյ Վիճակին Առաջնորդ Գեր. Սարգիս Արքեպիսկոպոս Հ. Ջալալեանց՝ — որ անձնական տկարութիւնը կազդուրելոյ համար գնացած էր ի Տփխիս և անտի յԱբասթումն, — ի 28ն ամսոյս եկաւ ի Ս. Էջմիածին։

ԱԽԱԼՔԱԼԱՔ.

Խմբագիր-Տէրն Արարատ ամսագրոյ.

Արժան եմ համարում յայտնել խմբագրութեանդ, որ Օգոստոս ամսի վերջերում Տփխիսից թեմի ուսումնարանների Թեմական Վերատեսուչ Սոփիաննոս քահանայ Տէր Սոփիաննոսեանցը իւր պաշտօնով ժամանեց յԱխլքալակ՝ գաւառիս Հոգևոր ուսումնարանների բարեկարգութեանց համար։

Բարեկրօն Քահանայն իւր փափուկ բնաւորութեամբ՝ ամենայն կարելի միջոց գործ դնելով՝ ջերմ սիրով աշխատում է յառաջ տանել հասարակաց Հօր — Ազգասէր Գէորգ Վեհափառ Հայրապետի ազնիւ բաղձանքը և սուրբ կամքը՝ հաստատելու համար գաւառումս տարրական ուսումնարաններ՝ տեղւոյս ուսումնակարօտ գիւղական Հայ մանուկների համար։

Քահանայ վերատեսուչը իւր գալստեան երկրորդ օրը իսկոյն ճանապարհորդեց դէպի վիճակիս գիւղօրայքը և նշանակեց բացուելիք կեդրոնական ուսումնարանների համար յարմարաւոր տեղերը՝ որ իւրաքանչիւր Շրջանական հասարակութեան մէջ, որը բաղկանում է 10 կամ 15 գիւղերից, շինուի գոնէ մի կեդրոնական ուսումնարան, ո՛ր գիւղում որ յարմար լինէր երթևեկ աշակերտաց դիւրութեան համար։

Ուրախութեամբ սրտի յայտնում եմ, որ մի քանի գիւղական հասարակութեանց մէջ սիրալիր ընդունելութիւն է գտած Սոփիաննոս Քահանայի յորդորական խօսքերը ուսումնարանների բացման մասին, գիւղացիներից շատերը ոգևորուել են նորա համոզական ազդու խօսքերից։ Սամխայ գիւղի հասարակութիւնը ստորագրութիւն բաց անելով իւր մէջ մի ժամում առձեռն այնքան կամաւոր նուէր է հաւաքել, որ բաւական է եղած իւրեանց ուսումնարանի ներքին շինութեանց և կազմակերպութեան համար։ Ուսուցչաց ռոճկի մասին նոյն վերատեսչի խորհրդով հասարակական վճիռ է կայացուել իւրաքանչիւր տան պարտաւորել երկու Կօդ ցորեան վճարք։

Սուլդա գիւղի անուանի Թորոս աղայ հարուստ քէհեան խոստացել է իւր սեփական ծախքով շինել մի շքեղ ուսումնարան իւրեանց գիւղում։ Մի ուսումնարան ևս խոստացել է շինել իւր ծախքով Նամկարայ գիւղի տիրացու Գրիգոր Զօրապետեանը միայն այն պայմանաւ՝ եթէ կեդրոնական ուսումնարանը նոյն Շրջանական հասարակութիւն բարեհաճեն իւրեանց գիւղում բաց անել։

Չենք կարող չըյիշել և այն, որ մի քանի գիւղօրէից հասարակութիւնք չեն համաձայնում կեդրոնական ուսումնարաններ բաց անել՝ պատճառելով գիւղերի միմեանցից հեռու լինելը և ձմեռուայ ցուրտ եղանակներում երթևեկութեանց դժուարութիւնքը աշակերտների համար։ Այդ հանգամանքում լաւ կը լինէր՝ եթէ երթևեկ աշակերտաց ծնողք համաձայնէին գոնէ ձմեռուայ եղանակում տեղաւորել իւրեանց որդիքը այն գիւղերի գերդաստանների մէջ՝ ուր բացուելու էր կեդրոնական ուսումնարանները և այդ դժուար չէր նոցա կատարելը։

Այդ ընդդիմացող հասարակութիւնք չընայելով իւրեանց անկարողութեանը կամենում են իւրաքանչիւրը իւրեանց գիւղում առանձին անկախ ուսումնարաններ ունենալ իւրեանց տէր ուսուցիչների կառավարութեան ներքև։ Նոքա չեն

մոածում՝ որ այդ փրկարար չեն իւրեանց որդւոց համար, ունենալ խոնաւ դոմի անկիւնում չոր փայտը ձեռին կանգնած մի մղած ուսուցիչ և դորան անուանել ուսումնարան, այդ չէ ժամանակի պահանջածը և Վ.հիմափառի ցանկացածը, այլ պահանջում են նորանցից ունենալ ժամանակի պահանջման համաձայն բարեկարգ ուսումնարաններ. բարեկարգ ուսումնարաններ ունենալու համար հարկաւոր է ունենալ լաւ ուսուցիչներ, լաւ ուսուցիչների համար էլ հարկաւոր է լաւ վարձք, առատ ռօճիկ, իսկ ուսուցչի համար բաւականացուցիչ ռօճիկ տալը այդ առհասարակ մեզանում անծանօթ է, թողունք բարձր դասակարգերը, զո՛նէ այնքան վարձք չեն համաձայնում տալ, որ փորը իշատէ ուսման հոտ առած՝ ուսուցչութեան նշանակութիւն և պարոքը հասկացող և ճանաչող անձինք էլ է յանձնառու լինէին այդ պաշտօնին։ Նոքա կարծում են, որ իւրեանց բաւական էր՝ եթէ ունենային իւրեանց գիւղերում տարեկան երեսուն կամ քառասուն ռուբլի վարձով ծառայող մի մի հողմարած մարդիկներ, որպիսիք գտնուումէին մինչև ցայսօր միայն մեծամեծ գիւղերում։ Խեղճ հասարակութիւնը դեռ ևս չըգիտէ այդ կոպիտ անձանց՝ փարժապետ կարծեցեալ տգէտներու մանուկ սերունդի վերայ ունեցած զարհուրելի հետևանքը. այդպիսի ուսուցիչները մատաղ սերունդի սիրտը պատռելուց՝ նորա ճոխ քանքարը փչացնելուց՝ ուղեղն և բանականութիւնը ցնդելուց բթացնելուց և խսպառ սպաննելուց իրաց՝ ոչինչ չդիտեն։

Մենք շեղուեցանք փոքր ինչ պէտք է ասէինք, որ բարեկրօն վերատեսուչ Քահանայն առայժմ շատ ու շատ դժուարութիւն է կրում մանկավարժ ուսուցիչներ դտնելու համար, թէև պիտոյ է ասել, որ մեզանում առհասարակ զգալի կարօտութիւն կայ մանկավարժ ուսուցիչների, բայց այնու ամենայնիւ պէտք է աշխատել։ Տէր Ստեփաննոսեանցը տեղեկանալու համար թէ՝ գտանվում են արդեօք գիւղական տիրացուների և կամ՝ քահանաների մէջ այնպիսիք, որք ընդունակ և կարող լինէին զոնէ առայժմ կատարել կեդրոնական ուսումնարաններում ուսուցչութեան պաշտօնը, զորա համար հաւաքեց Ա-խուրքալակում գաւառիս նշանաւոր գիւղերից քահանայք և տիրացու վարժապետներ՝ և նորանց միջից մի քանիսը ընտրել է և այդ օրը դասախօսութիւն է արել։

Լսեցինք, որ Վերատեսուչը՝ իւր այստեղից գնալու առաջ գաւառիս Շինական կեդրոնական ուսումնարանների վերայ իւր օգնական է նշանակել Խորէն Քահանայ Բարսղեանցը, որոյ գործունէութիւնը արդէն յայտնի է։

ԿԱՐԱՊԵՏ ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ

15 Սեպտ. 1875 -դ

ՑԱԼԷՎԼԻ։

Այս նամակի վերայ անելիք մեր դիտողութիւնքը յաջորդ թերթերու կը թողումք։

Ի ՁԱԼԹՐԷ.

Խմբագրութեան Երբեմն առաքեալ.

Հոգաբարձութիւնս Հոգևոր-Ծխական Դպրոցի Զալթր գեղջ Նոր-Նախիջևանի՝ ընդունելով յայտնիկ աւուրս զերկու հազար ընտիր աղիւս (տեղական գնով քսանվինգ ռուբլեաց արժողութիւն ունի) ի Նախիջևանցի Պ. Խաչատուր Շահնարեանէ ի պէտս վառարանի նորակառոյց դպրոցի սոյնոյ գեղջ, այսու խոնարհաբար խնդրէ ի . . . . Խմբագրութենէդ՝ մի բացասել տեղի տալ գրութեանս այսմիկ յանկեան ուրեք ի պատուական թերթից Ազգայնոյս Արարատայն ի հրատարակումն խորին շնորհակալութեան ի կողմանէ Հոգաբարձութեանս առ յիշատակեալ նուիրատու Պ. Խաչատուր Շահնարեանն։

Հ-ի-ր-ա-ր-ի-ա Ն. Գրիգոր-յան

ՄԵԼՔՈՆ ՔԱՀ. ՏԷՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՑ.

10 Սեպտ. 1875 -դ

Ի Զ-ՄԸՐ.